Լրացուցիչ տեղեկություններ

Շահառու հաստատություն

Անվանում՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն

Հասցե՝ Երևան, 0010, Հանրապետության պողոտա,Կառավարական շենք 3

Էլ. փոստ՝ info@armstat.am

Կայք՝ www.armstat.am

Թվինինգի գրասենյակ

Թվինինգի մշտական խորհրդատու (ԹՄԽ)՝ Պիտեր Բոնստեդ Անան Հանսեն

Հասցե՝ Երևան, 0010, Հանրապետության պողոտա,Կառավարական շենք 3, 618 սենյակ

Հեռ.՝ (+374) 11 526 391

Բջջ.՝ (+374) 99 077 916

Էլ. փոստ՝ pah@dst.dk

Ծրագրի կայք՝ www.dst.dk/armenia2015

Այս ծրագիրն իրականացվում է Դանիայի վիճակագրության կողմից՝Ֆինլանդիայի, Իտալիայի, Լիտվայի վիճակագրությունների հետ համատեղ և ԵՄ աջակցությամբ: Սույն հրապարակման մեջ տեղ գտած տեսակետները կարող են չարտացոլել Եվրոպական հանձնաժողովի տեսակետը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ԵՄ) ՄԱՍԻՆ

Եվրոպական միությունը բաղկացած է 28 անդամ երկրներից, որոնք որոշել են աստիճանաբար միավորել իրենց փորձառությունը, ռեսուրսները և ճակատագրերը: 50 տարվա ընդլայնման ընթացքում նրանք միասին կառուցել են կայունության, ժողովրդավարության և կայուն զարգացման գոտի՝ պահպանելով մշակութային բազմազանությունը, հանդուրժողականությունը և անհատի ազատությունները:

Եվրոպական միությունը նպատակ ունի կիսել իր նվաճումները և արժեքներն իր սահմաններից դուրս գտնվող պետությունների և ազգերի հետ:

Եվրոպական հանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է:

Այս ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Եվրոպական միության Թվինինգ ծրագիր Հայաստանի համար

ԵՄ Թվինինգ ծրագիր

Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական համակարգին – II փուլ

Ի՞նչ է Թվինինգը

Թվինինգը համագործակցության գործիք է շահառու երկրի պետական հաստատության և ԵՄ անդամ պետության համապատասխան հաստատության միջև:

Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) շրջանակում Թվինինգ ծրագրերը միտված են աջակցել երկրներին իրենց հաստատությունները ԵՄ ստանդարտներին համապատասխանեցնելու գործում: Եվրոպական հարևանության քաղաքականության ԵՄ ֆինանսական գործիքի միջոցով ԵՄ անդամ երկրների հաստատությունների փորձագետները փոխանցում են իրենց գիտելիքները և փորձը համապատասխան շահառու երկրի գործընկերներին:

Երկարաժամկետ փորձագետը (Թվինինգի մշտական խորհրդատու) հանդիսանում է ծրագրի «ողնաշարը» և աշխատում է մի շարք կարճաժամկետ փորձագետների հետ ծրագրի իրականացման ողջ ընթացքում (սովորաբար մեկ կամ երկու տարի)՝ շահառու հաստատության հետ համատեղ իրականացնելով ծրագրի կոնկրետ նպատակները:

Վիճակագրական ծառայության Թվինինգ ծրագիրը

2015 թվականի օգոստոսին մեկնարկեց երկու տարի տևողությամբ վիճակագրության Թվինինգ ծրագիրը, որի շահառուն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությունն է, իսկ իրականացնող գործընկերը՝ Դանիայի վիճակագրությունը:

Ծրագրում ընդգրկված կլինեն և օգուտներ կքաղեն նաև մի շարք այլ ազգային շահառուներ:

Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանի պաշտոնական վիճակագրության արդիականացմանը՝ ներդնելով ԵՄ ստանդարտներին համապատասխանեցված վիճակագրության նոր մեթոդաբանություններ՝ ուժեղացնելով պաշտոնական վիճակագրության տարածումը հանրության շրջանում:

Ծրագիրը բաղկացած է վեց բաղադրիչներից.

- Բաղադրիչ 1: Վիճակագրության տարածում
- Բաղադրիչ 2: Ժողովրդագրական վիճակագրություն
- Բաղադրիչ 3: Աշխատաշուկայի վիճակագրություն
- Բաղադրիչ 4: Աղքատության վիճակագրություն
- Բաղադրիչ 5: Նորարարական վիճակագրություն
- Բաղադրիչ 6: Ջրի հաշիվներ

Ծրագիրը կիրականացնի մի շարք գործողություններ՝ խմբավորված այդ վեց բաղադրիչներում:

Ծրագրի իրագործմանը կմասնակցեն Դանիայի, Ֆինլանդիայի, Իտալիայի և Լիտվայի ազգային վիճակագրության հաստատությունների փորձագետները՝ սերտորեն համագործակցելով Հայաստանի վիճակագրական ծառայության գործընկերների հետ:

Ֆինանսավորում

Ծրագիրը ֆինանսավորվում է ԵՄ կողմից 1.000.000 եվրոյով:

Ծրագրի գործընկերներ

ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը (ՀՀ ԱՎԾ) հանրային շահին ուղղված գործառույթներ իրականացնող մարմին է, որն իր խնդիրներն իրականացնելիս անկախ է Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից և որի առաքելությունն է հանրության համար վիճակագրության հավաքագրումը, հրապարակումը և տարածումը:

Դանիայի վիճակագրությունը Դանիայի ազգային վիճակագրության ինստիտուտն է, որն ապահովում է անկողմնակալ վիճակագրություն հասարակության վերաբերյալ որպես ժողովրդավարության և տնտեսության հիմք: Դանիայի վիճակագրությունը ունի վիճակագրական նպատակներով վարչական ռեգիստրների օգտագործման երկարատև և զարգացած ավանդույթ:

Ծրագրի իրականացման ընթացքում Դանիայի վիճակագրությունը սերտորեն կհամագործակցի Ֆինլանդիայի, Իտալիայի և Լիտվայի վիճակագրությունների հետ:

Ծրագրի թիմ

Ստեփան Մնացականյան, ՇԵ ծրագրի ղեկավար
ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն (Նախագահ)
Անահիտ Սաֆյան, ԹՄԽ գործընկեր
ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն
Շառլոտե Յուլ Հանսեն, ԱԵ ծրագրի ղեկավար, Դանիայի վիճակագրություն
Պիտեր Բոնստեդ Անան Հանսեն, Թվինինգի մշտական խորհրդատու (ԹՄԽ), Դանիայի վիճակագրություն